

1586a


Գ.Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՏԱԳԱԻԹՅՈՒՆ

ԳՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈԴԺՈՂՎՈՐԱՏԻ

ԵՐԵՎԱՆ

1980



№ 86

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 86


ԴՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1953

Հ

ԿԵՇԵՎԱՐՄԱՆ

A T
4290



ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՅՈՒԹ ՅՈՒՆ ՀԱՅԺՈՂՎՈՄԱՆՔ

ՏԵՐԵՎԱՆ

1950

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՎԵՐՏԻՆ
ՊԱՏՎԵՐ 1757
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐ 4082 (Բ)
ՏԻՐԱԳ 8000

ԿԱՏԱՐԱԿԹՅՈՒՆ

Կատաղությունը վարակիչ հիվանդություն է, նրանով հիվանդանում են բոլոր կենդանիները, իսկ ընտանի կենդանիներից ոմենից հաճախ՝ շունն ու կատուն։ Հիվանդություն և նաև մարդը։

Հիվանդությունն առաջ է գալիս կատաղած կենդանիների կծելուց, վորոնց թուքը խիստ վարակիչ է վոչ միայն հիվանդության ընթացքում, այլ և հիվանդության նշանները յերևալուց մի քանի որ առաջ։ Աւրեմն՝ վարակվել կարելի յե վոչ միայն կատաղած կենդանու կծելուց, այլ և նրա լիզելուց, յեթե կաշվի վրա յեղած փոքրիկ, նույնիսկ աննկատելի վերջերի կամ քերծվածքի վրա ընկնի հիվանդ կեղանու թուքը։

Կատաղած կենդանու կծելուց կամ նրա թքով վարակվելուց հետո, հիվանդությունը մեծ մասամբ զարդանում է 30-ից մինչև 45 որ անցնելուց հետո։ Հիվանդությունը տեսում է 3-ից մինչև 7-8 որ, վորից հետո հիվանդը մեռնում է։

Վարակված կենդանիների և մարդկանց հիվանդության զարդացման առաջը կարելի յե առնել միայն նախազդուչական պատվաս-

տառմներով, վորը չեղոքացնում և մարմնի մեջ
մտած վարակիչ թույնը:

Հիմանդրության նշանները սկսվելուց հետո
բժշկելն այլևս անհնար ե:

Ի՞ՆՉԻՑ Ե ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կատաղությունը հայտնի յէ շատ հին ժա-
մանակներից: Առաջներում յենթադրում եյին,
և այդ յենթադրությունը մինչև այժմ ել տա-
րածված և ժողովրդի մեջ, վոր շան կատաղու-
թյունը առաջ և դալիս ինքն իրեն, յերբ նա
սասաիկ շարացած և լինում, կամ ամառվա շո-
դին ծարավ և մնում, կամ տաք կերակուր և
ուտում, կամ յերբ նրա սեռական պահանջը չի
բավարարված:

Սակայն գիտությունն ապացուցել ե, վոր
այդ բոլոր յենթադրություններն ել անհիմն են
ու սխալ: Կատաղությունը առաջ և դալիս մե-
այն կատաղած կենդանու կծելուց կամ նրա
թքով վարակվելուց:

Յեթե յերբեմն պատահում ե, վոր չները
կատաղում են առանց ակնհայտ պատճառների,
ոկտք և յենթադրել, վոր նրանց կարող են կը-
ծած լինել մանր կենդանիներ, որինակ՝
կատաղած մկներ, վորովհետեւ, ինչպես ասե-
ցինք, կատաղությամբ հիմանդանալուց զերծ
չեն թե բոլոր կաթնասուն կենդանիները և
թե թռչունները: Բացի այդ, կարող ե լինել,
վոր շանը կծել են մի ամիս կամ ավելի առաջ
և այդ գեպքը չի նկատվել կամ մոռացվել ե:

Մեզ հայտնի յէ մի դեպք, յերբ մի կատու

կատաղած շան բերանից ազատվելով, փախել
բարձրացել և ծառի վրա: Տերը կարելցելով
կապին, մոտենում և և ծառից վրայը առ-
նում նրան: Մի քանի շաբաթ անցնելուց հետո
այդ մարդը հիմանդանում և կատաղությամբ
և մեռնում: Պարզվում է, վոր այդ մարդու
ձեռքերի վրա քերծվածքներ են յեղել և կատ-
պին ծառից վայր իջեցնելիս՝ կատաղած շան
թուքը կատվի բրդի վրայից ընկել և նրա ձեռքի
վերքի վրա և, այդպիսով, վարակել նրան:

Այս դեպքը ցույց է տալիս, թե ինչպիսի
աննկատելի ճանապարհներով կարելի յե վա-
րակվել: Հիշյալ մարդու բարեկամներն ու հա-
րեանները հաստատում եյին, վոր նրան յեր-
բեք կատաղած կենդանի չի կծել և մարդը հի-
մանդացել է ինքն իրան, առանց վորեւ պատ-
ճառի:

ՎԱՅԵԼՈՒԹՅԵՆ ՎԱՐԱԿԻՉ ԹՈՒՅՆԵ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատաղությունը, ուրիշ վարակիչ հիման-
գությունների նման ունի իր միկրոբները
(մանրենները), սակայն կատաղության միկ-
րոբը միշտ այժմ դեռևս հայտնի չե գիտու-
թյանը:

Առաջներում յենթադրում եյին, վոր կա-
տաղությամբ կարելի յե վարակվել հիմանդի
որյան, նրա քրտինքի, կաթի կամ արտաշըն-
չած ուրի միջոցով: Սակայն հետագայում գի-
տությունը պարզել ե, վոր այդ սխալ ե:

Ներկայումս ապացուցված և հաստա-

ված ե, վոր վարակվելու միակ սկառնառը՝
կատաղած կենդանու թուքն ե և այդ թուքը
վարակիչ ե վոչ միայն կենդանու հիվանդու-
թյան միջոցին, այլ հիվանդության նշանները
յերեալուց նույնիսկ 10-12 որ առաջ:

Կատաղության վարակիչ թույնը պըտ-
նվում ե գլխավորագես գլխի և մեջքի ուղեղ-
ների ջղերի մեջ:

Թե՛ մարդու և թե՛ կենդանիների ջղերը
(նյարդերը), սկսած գլխի և մեջքի ուղեղնե-
րից՝ ծառի նման ճյուղավորվում են ամբողջ
մարմնի մեջ, մինչև մատների ծայրերը:

Մարմնի վոր տեղից ել վոր կծած լինի
կենդանին՝ կատաղության թույնը պետք է
հասնի գլխի և մեջքի ուղեղներին և այնաեղ
միայն զարգանալով՝ առաջացնի հիվանդու-
թյուն:

Ուրեմն՝ թույնը մտնելով մարմնի վորեև
մասը, ջղերի ուղղությամբ ձգտում է դեպի
ուղեղը և այնտեղ զարգանալուց հետո, նույն
ճանապարհով տարածվում է ամբողջ մարմնի
մեջ. հենց այդ ճանապարհով ել հասնում են ան-
թքի դեղձերին և թունավորում ու վարակիչ
գարճնում թուքը:

Արդյոք չի՞ կարող կատաղության թույնը
արյան միջոցով ել տարածվել մարմնի մեջ՝
կենդանու կծելուց հետո:

— Վո՛չ, չի կարող, վորովհետեւ. հիվանդ
կենդանիների արյան մեջ կատաղության
թույն չի լինում:

Յեթե կատաղած կենդանու յերակը բաց

անելով վերցնենք նրա արյունը և սրսկենք ա-
ռազջ կենդանուն—վերջինս չի վարակվի. այս-
անդից պարզ է, վոր կատաղությունն արյան
միջոցով չի տարածվում:

Կատաղության վարակիչ թույնը զանտ-
կան կենդանիների թուքի մեջ տարբեր ուժ-
ունի. կատաղած դաշլի կծածն ավելի վտան-
գումոր է, քան ուրիշ կենդանունը:

Տարվա վո՞ր յեղանակներին են ավելի շատ
լինում կատաղության դեպքեր:

Ժաղովրդի մեջ տարածված է այն կարծի-
քը, թե կատաղությունն առաջ է դալիս դըլ-
խավորապես ամառվա շոգին: Ճիշտ է, կա-
տաղության դեպքերն ավելի հաճախ լինում
են ամառը, սակայն այդ յերեսույթն ամառվա
շոգի հետ կապ չունի: Պատճառն այն է, վոր
ամառը շները դուրսը, փողոցներում աղատ
թափառելու և իրար վրա հարձակվելու ավելի
հարավորություն ունեն, այն ինչ ձմեռը,
ցուքը յեղանակին, տաք անկյուններում պա-
ռապարված, տրամադիր չեն թափառելու,

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՆՅԱՆՆԵՐԸ

Ինչպես ամեն մի վարակիչ հիվանդու-
թյան, նույնպես և կատաղության ժամանակ,
վարակվելու որից մինչև հիվանդության նը-
շանների յերեալը՝ անցնում է վորոշ ժամանա-
կամիջոց, վորը կոչվում է հիվանդության
«թագուն շրջան»:

Կատաղության նկատմամբ այդ ժամանա-
կամիջոցը կամ, ինչպես ասացինք, «թագուն

շրջանի» տևողությունը լինում ե զանազան, տատանվում ե և գլխավորապես կախված է վերքերի քանակից, տեղից, նրա մեծությունից ու խորությունից, այլ և վերքի մեջ մասն թուքի քանակությունից և իննդանու տեսակից:

Այսպես, շան և ձիու հիվանդության «թագուն շիրանը» տևում է 30-60 որ, կոմինը և յեզանը՝ 20-40 որ, խողինը՝ 15-30 որ, մանր կենդանիներինը՝ 10-40 որ:

Հաղվաղյուտ դեսպեր են յեղել, յերբ հիվանդությունը յերևացել է վարակվելուց վեց ամիս և նույնիսկ մի տարի հետո:

Շան կատաղությունը լինում է յերկու ձևեր՝ «ուժեղ» և «հանդարտ»: Ուժեղ կատաղության սկզբնական շրջանում մեծ մասամբ կենդանու ջերմաստիճանը բարձրանում է և բնավորությունը փոխվում, լինելով մերթ ուրախ, մերթ տխուր և դյուրապրպիո:

Այսուհետեւ նա անհանգիստ ե դառնում և ախործակը կորցնում, սակայն հրաժարվելով սովորական կերակուրից՝ ուտում և փայտի և յերկաթի կտորներ, թուղթ, ապակի և այլն: Աչքերն սկսում են կարմրել, բիբերը լայնանում են և շնչառությունը դժվարանում:

Սրան հետևում է հիվանդության յերկրորդ շրջանը, յերբ շունը սաստիկ գրղռվում է, անհանգիստ դառնում և կծելու մեծ պահանջ և զգում: Նա հաջում է և վոռնում խրոպոտ ձայնով, աշխատում ե տնից փախչել և

հեռանալով՝ տննալատակ թարմառում ե, Տառ-
նապարհին հարձակվելով և կծելով հանդի-
պողին՝ լինի մարդ, կենդանի թե անշունչ
տուարկա:

Հիմանդության վերջին շրջանում աստի-
ճանաբար զարգանում ե անդամալուծությու-
նը. քայլվածքը դառնում է յերերուն, վլուխն
ու պոչը կախ ընկած, լեզուն բերնից դուրս ըն-
կած, իսկ շնչառությունն ավելի դժվարացած։
Անհանգստությունն այս շրջանում մեղմանում
է, շունչ այլիս չի հաջում և չի կծում և ու-
ժասպուր զարձած՝ առանձնանում և մի ան-
կյուն, անզոր լինելով վոտքի վրա կանգնել և
հյուծված դրության մեջ սատկում և հիման-
դության հիգերորդ կամ վեցերորդ որը։

Հիմանդության ամեն մի շրջանի տեսո-
ւությունը մոտավորապես յերկու որ ե, բայց
յերբեմն պատահում ե, վոր հիմանդությունը
տեսում և մինչեւ 9-10 որ։

Կատաղության «հանդարս» ձեր ժամա-
նակ, ինչպես անունն ել ցույց և տալիս, կեն-
դանին հանդիսու և լինում և սովորաբար չի
հարձակվում ու չի կծում։ Հիմանդության
այս ձեւը՝ անդամալուծության արագ զարգա-
նալու հետեանքով՝ ավելի կարճատե և լինում
և շունը 3-4 որվա ընթացքում սատկում և
հյուծված դրության մեջ։

Կատաղած ձիերը նույնպես լինում են ան-
հանդիսա, վախկոտ, հաճախ խըինջում են,
կրծում են մոռը և նույն իսկ իրենց մար-
մինը։ Եերբեմն հարձակվում են կենդանիների

և Մարդկանց վրա և կծում։ Հիվանդությունը
տեսամ և Յ-ից մինչև 6 որ և կենդանին անդա-
մալույժ դառնալով՝ սատկում է։

Յեզները և կովերը կատաղելու դեպքում՝
շարունակ բառաչում են կոպիտ ձայնով, չեն
կծում, բայց խփում են յեղջյուրով ու վոտնե-
րով և այնպես ուժգին, վոր յերեմն նույնիսկ
կոտրում են իրենց յեղջյուրը։

Հիվանդությունը տեսում է 5-6 որ։

Կատաղած կատուները շատ վտանգավոր
են լինում, հարձակվում են մարդու վրա և
աշխատում չանկուել և կծոտել յերեսը։

3-6 որվա ընթացքում հիվանդ կատու-
ները սատկում են։

Կատաղությունից սատկած կամ սպա-
նած չների դիահատության ժամանակ հաճախ
նրանց ստամոքսում գտնում են՝ յերկաթ,
մեխ, փայտ, լաթ, հող, քար և այլն, վոր-
պիսիք սովորաբար առողջ կենդանու ստա-
մոքսում չեն լինում։ Ուրիշ, աչքի ընկնող
նշաններ չեն նկատվում։

1903 թվին Նեղրի անունով իտալացի
դիտնականը կատաղած կենդանիների ուղեղը
հետազոտելիս՝ գտել է հատուկ մարմնիկներ,
վորոնք դիտության մեջ մինչև այժմ ել նրա
անունով կոչվում են «Նեղրիի մարմնիկներ»։
Ներկայումս վորեն կենդանու կատաղած լի-
նելը կասկածելու դեպքում, բժիշկները հի-
վանդ կենդանու ուղեղը հետազոտում են և
յեթե «Նեղրիի մարմնիկներ» են հայտնաբեր-
վում, արդեն հաստատապես վորոշում են կեն-

դանու կատաղած լինելը : «Նեղրիի մարմնիկ-ները» շատ մանր են և նրանց կարելի յէ տես-նել միայն խոչըրացույցով :

ՄԱՐԴՈՒ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Մարդը կատաղությամբ վարակվում է կատաղած կենդանիների կծելուց կամ նրանց թուքի միջոցով, յերբ թաքն ընկնում և նրա մարմնի վրա յեղած թարմ վերքի կամ քերծ-վածքի վրա : Առաջ կազմին դիպչելիս չի վարակվում :

Մարդու հիվանդության «թագուն շըր-ջանը» տևում է 30-60 որ, հաղվագյուտ դեպ-քերում՝ նույնիսկ 6 ամիս կամ մի տարի :

«Թագուն շըրջանի» տևողության վրա տղ-կում են զանազան հանգամանքներ, ինչպես մարմնի մեջ մտած թույնի (թուքի) քանա-կությունը, վերքի հեռավորությունն ուղե-ղից և նրա խորությունը, արդյոք մե՞րկ մոր-մինն ե կծած, թե չորի վրայից : Վերջին դեպ-քում վորոշ չափով կարելի յէ հուսալ, վոր կենդանու թուքը կարող է չորի մեջ ծծվու-ինել և մարմնի վերքին չդիպած : Առանձնա-պիս պետք ե հիշել, վոր հարբեցողությունից և խմիչքների գործածությունից առաջացած ջղերի թուլությունն ու տկարությունը նպաս-տում են հիվանդության արագ դարզացմանը :

Վօրքան հեռու լինի կծած վերքը դիմի ուղեղից, այնքան թույնը յերկար ճանապարհ և ժամանակ ունի անցնելու և ուղեղին հա-նելու :

Այդ պատճառով վոտքերի վերքը համար-
վում է համեմատաբար քիչ վտանգավոր, վո-
րովհետև իր ժամանակին անհրաժեշտ պատ-
վաստումը կատարելով՝ հնարավոր ե կանխիւ-
հիվանդության զարդացումը։ Ընդհակառա-
կը՝ մարմնի վերի մասերի և մանավանդ դլիսի
վերքերը չափազանց վտանգավոր են, վորով-
հետև կատարելության թույնը կարճ ճանապար-
հակ շատ արագ կարող է համել ուղեղին։

Պատվաստումը դրական հետևանք է տո-
լիս միայն այն ժամանակ, յերբ այդ կատար-
վում է կատարելության թույնը՝ ուղեղին հաս-
նելուց առաջ։

Եորի վրայից կծած վերքը, ինչպես առե-
ցինք, միայն վորոշ չափով է նվազեցնում վր-
անգը, բայց յերբեք չի ապահովում վարակ-
վելուց և հիվանդանալուց։

Մարդը հիվանդության սկզբնական շր-
ջանում լինում է ճնշված դրության մեջ,
կծած վերքի տեղը հաճախակի քոր և գալիս
և ցավում է, ապա սկսվում է մարմնի ընդ-
հանուր թուլություն ու դիխացավ։

Հիվանդն աշխատում է առանձնանալ,
դաւնում է անհանդիսա և քունը կորցնում է։
Անհանդստությունն աստիճանաբար անցնում
է և նրան փոխարինում է ջղագրգռությունը։
Հիվանդը ջերմում է, նրա սիրտն ուժեղ բա-
րախում է, լեզուն դողդողում, չնչառությունը
դժվարանում։

Կուլ տալը սաստիկ դժվարանում է, մա-
նավանդ յերբ հիվանդը փորձում է խմել. խը-

մելու փորձն առաջ և բերում այնպիսի տան-
չալից ցնցումներ, վոր նա, չնայելով սաստիկ
ծարավին՝ սարսափահար հրաժարվում և
վրից:

Նմտն ցնցումներ զգում և նուի թեթի
քամուց, ուժեղ լուսավորությունից կամ ան-
ակնկալ ձայնից:

Հիվանդի ձայնը դառնում և խապատ,
խռոքերը կցկառուր, սակայն նա չի հարձակ-
վում շրջապատղների վրա, իսկ յերբեմն
նույնիսկ ինքն և խնդրում ուրիշներին հեռու-
քաշվել իրանից: Հիվանդը յերկար ժամանակ
պահպանում և գիտակցությունը և միայն յեր-
բեմն ուշքը կորցնում:

Հիվանդության յերկրորդ կամ յերրորդ
որն սկսվում և թքահոսություն, վորն սկըզ-
բում լինում և բավականին թանձր և ծորող,
հետո դառնում և ջրի և առատ:

Հիվանդը քրտնում և, տառապում և փոր-
կապությումը և հաճախ փոխում և: Վերջա-
պես համնում և անդամալուծությունը, հի-
վանդը թուրանում և և մեռնում, ազատվելով
տնասելիք տանջանքներից:

Նախորոք վորոշել, թե արդյոք մարդը
կատաղած կենդանու կծելու հետեւանքով և
վարակվել, թե վոչ, դժվար և, վորովհետն
այդ վերքերը վոչ մի արտասովոր բան չեն
ներկայացնում և շուտով առողջանում են՝ սո-
վորական վերքերի պես:

Այդ և պատճառը, վոր բժիշկը կծած վեր-
քը տեսնելով՝ յերբեք չի կարող վորոշել, թե

արդյոք կատաղած կենդան. կծած ե, թե
վոչ, մինչեւ վոր չհետազոտի կծող կենդանաւ։
Բժշկական գիտությունը դեռևս անզոր և
զարգացած կատաղությունը բժշկելու, սու-
կայն վարակվածների հիվանդանալու առաջն
առնելու հարցում մեծամեծ նվաճումներ ե
արել։

ՆԱԽԱԶԳՈՒԹԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Մինչև 1885 թիվը կատաղությամբ վա-
րակվելուց հետո հիվանդության զարգացումը
կանխելու միջոցներ չկային։ Միայն 1885 թ.
ֆրանսացի հայտնի գիտնական Պատյորը
փառավորապես լուծեց այդ ինդիրը՝ կատա-
ղության դեմ նախազգուշական պատվաս-
տամների գյուտով։

Կատաղության առաջն առնող պատվաս-
տամը հիմնականում նման է ծաղկի պատ-
վաստմանը։ Ավելի պարզ պատկերացնելու
համար՝ հիշենք, թե ի՞նչ է ծաղկի պատվաս-
տամը։

Յեթե ծաղկով հիվանդ մարդու վերքի
թարախով վարակնենք հորթին, վերջինս կհի-
վանդանա և նրա մարմինը կծածկվի ծաղկի
վերքերով։ Յեթե նույն հորթի ծաղկի վերքի
թարախով պատվաստենք առողջ յերեխային՝
նա չի հիվանդանա և պատվաստի տեղում
կդոյանա միայն փոքրիկ վերք, վորը մի քանի
որից չորանալով՝ կառողջանա։ Ապագայում
պատվաստված յերեխան չի վարակվի, ծաղ-
կով։

Այսպիսով, պարզվում է, վոր ծաղկի վա-
րակիչ ուժը հորթի մարմնի մեջ թուլանում է,
և յեթե այդպիսի թուլացած թույնը որոկենք
մարդուն՝ վերջինս չի հիվանդանա և կարող
կլինի հետությամբ հաղթել թուլացած թույ-
նին, վորի հետևանքով նրա արյան մեջ կգո-
յանա արդ հիվանդության դեմ ուժեղ հակա-
թույն։ Դրանից հետո, յեթե մարդը վարակվի
ծաղկով, նրա արյան մեջ պարունակվող հա-
կաթույնը չի թողնի, վոր հիվանդությունը
պարզանա :

Կատաղության դեմ մարդկանց պատ-
վասանլու համար՝ դիտնական Պաստյորի նը-
պատակն ե յեղել թուլացնել կատաղության
վարակիչ թույնի ուժը։ Նա սրսկել ե կատա-
ղության թույնը ճագարին։ Ճագարը վա-
րակվել ե և շատ ծանր հիվանդացել։ Ապա հի-
վանդ ճագարի կատաղության թույնը նա
սրսկել ե մարդուն, վորի նկատմամբ թույնն
իր ուժը շատ թուլացրած ե յեղել։

Թույնի ուժն ավելի նվազեցնելու նպա-
տակով Պաստյորն սկսել ե չորացնել հիվանդ
ճագարի ուղեղը, վորի մեջ, ինչուս ասեցինք,
դանվում ե կատաղության թույնը։

Այսուհետեւ թուլացրած թույնի մի քանի
սրսկումներ կատարելով՝ նա պաշտպանել ե
մարդուն հիվանդանալուց։

Սրսկումների միջոցով մարմնի մեջ ներար-
կված թուլացրած (րուժիչ) թույնը նույնպես
ջղերի միջոցով դնում հասնում ե զլիսի ու-
ղեղին, սակայն համեմատարար կարծ ժամա-

հակամիջոցում (4 որ), այնինչ կատաղած կենդանու կծելու հետևանքով հիվանդության վարակիչ թույնը հասնում է գլխի ուղեղին մոտավորապես 30-60 որվա ընթացքում։ Առաջա ուրեմն, պատվաստման միջոցով ներարկված բուժիչ թույնը նույն ժամանակամիջոցում բավականաչափ արդեն հավաքված է լինում գլխի ուղեղում և վերջինս պատրաստած և լինում արդեն տնհրաժեշտ չափով հակաթույն։ Հետևապես, յերբ կատաղության վարակիչ թույնը հասնում է ուղեղին՝ այսուեղ հանդիպում և հակաթույնի և ինքը վոշընչանում է, իսկ մարդն ազատվում է հիգանդանալուց։

Այսպիսով, ուրեմն, հասկանալի յէ, թե ինչու գլխի և զլիսից մոտիկ զտնված մասերի վերջնըն ավելի վտանգավոր են համարվում։ Պատճառն այն է, վոր վարակիչ թույնն իր եաբճ ճանապարհը կարող է չուտ անցնել և հասնել ուղեղին, յերբ մարմինը դեռ չի կուռզացել պատրաստել հակաթույն։

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՑԵԽՆԻԿԱՆ

Բժշկական հատուկ լարորատորիաները, վորսնք կատաղության գեմ պատվաստումներ են կատարում, կոչվում են «Պատայորյան կայաններ», հայտնի գիտնական Պատայորի անունով։

Այդ կայաններում կատաղության թույնը միշտ պահում են թարմ դրության մեջ՝ չա-

բանակ մեկ ճաղարից մյուսին վարտիկելու միջոցով:

Պատվաստման նյութը պատրաստելու համար՝ սպանում են կատաղության վերջին տարինեանին հասած, մերձ ի մահ մի ճաղար, հանում են նրա վողնաշարի ուղեղը և կախելով ապակյա հատուկ ամանի մեջ՝ չորացնում են մութ տեղում (լույսն ավելի ևս թուացնում և թույնի ուժը), վորանդ առքությունը 20 աստիճանից բարձր չպիտի լինի:

Ապա վերցնում են չորացրած ուղեղից մի կտոր (մի հոգու համար՝ մոտավորապես ցորենի հատիկի չափ), դնում են ապակյա մաքուր ամանի մեջ և տրորում աղի լուծվածքի հետ միասին, մինչև վոր ստացվի միապատճառ, կաթնանման հեղուկ:

Հետո վերցնելով հեղուկը սրսկիչի (շպրից) մեջ, սրսկում են մարդու կաշվի տակ: Պատվաստումների ամենահարմար տեղը համարվում է փորի կաշին:

Ներկայումս՝ պատվաստման տեխնիկան այլ և այլ կայաններում մի շարք ձևափոխությունների յե յենթարկվել, սակայն պատվաստման ընդհանուր սկզբունքը մնում է նույնը:

Բժշկության հաջողությունն ամբողջապես կախված է պատվաստումներն իր ժամանակին սկսելուց, վորպեսզի ժամանակը բարվարի մարմինը թույնի դեմ չեղոքացնելու և ընդունակ դարձնելու բարադրության վարա-

կիչ թույնին գիմաղբելու իր պատրաստած
հակաթույնով:

Ուրեմն, պատվաստման հաջող հետևանք-
ները կախված են «թագուն շրջանի» տես-
զությունից: Բայց վորովհետև «թագուն շրջ-
անի» տեսողությունը վորոշելն անհնարին է,
ուստի պատվաստումը պետք է սկսնել կեն-
գանու կծելուց կամ այլ կերպ առաջ՝ վարակ-
վելուց անմիջապես հետո, առանց ժամանակի
կօրցնելու:

Պատվաստումների բացառիկ նշանակու-
թյունը հասկանալու համար բավական է ս-
սել, վոր Պաստյորի գյուտից առաջ, կատա-
ղած կենդանիների կծելուց 1000 մարդուց հի-
վանդանում ելին 350 հոգի, իսկ այժմ 1000-ից
ն-ը:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Այն բոլոր դեպքերում, յերբ կատա-
ղած կամ այդ տեսակետից կասկածելի կեն-
դանին կծել ե մեկին, կամ յերբ կենդանին կծե-
լուց հետո անհետացել ե և հնարավորություն
չի յեղել վորոշելու նրա տռողջական վիճակը՝
անհրաժեշտ ե շտապ կերպով՝ պատվաստում-
ների յենթարկել:

2. Յերբ հիշյալ կենդանիները թեև չեն
կծել, բայց նրանց թուքն ընկել ե մարմնի:
թարմ վերքերի կամ քերծվածքի վրա, նույն-
պես պետք է պատվաստել:

3. Պատվաստումն ապահովում է կատա-
ղությամբ հիվանդանալուց մի տարի ժաման-

նակով։ Յեթե պատվաստելուց մի տարի
անցնելուց հետո՝ նույն մարդուն նորից կտ-
առաղած կենդանի կծի՝ պետք և նորից պատ-
վաստել։

4. Վարակվելուց հետո պատվաստումը
վորքան շուտ կատարվի՝ այնքան նրա հետե-
զանքը բարեհաջող կլինի։

5. Կծած վերքերը պետք ե լվանալ ջրով,
ապա կարբույան թթուի, ֆորմալինի կամ
ուռեմայի լուծույթով կամ սպիրոով։

6. Պատվաստման միջոցին հարբեցողու-
թյունը, ֆիղիկական և մտավոր հոգնածու-
թյունը վնասակար են։

7. Պատվաստումները վոչ մի վնաս չեն
կարող պատճառել առողջությանը, ապա ու-
րիշմն բժշկության միջոցին պատահած վորեւ
հիվանդությունը չպետք ե վերադրել պատ-
վաստումներին։

8. Կանանց ամսականները, հղիությունը
և ծննդաբերությունն արգելք չեն կարող լի-
նել պատվաստումներին։


9. Մայրը, պատվաստման միջոցին, կտ-
րող և կերակրել ծծկեր յերեխային, առանց
վորեւ վտանգի յենթարկելու յերեխայի տ-
ռողջությունը։

10. Հիվանդության նշանները յերեալուց
հետո բժշկությունն անհնար ե. այդպիսիների
տեղափոխությունը բժշկելու նպատակով՝ մի-
ժիայն իզուր տանջանք և պատճառում հի-
վանդներին։

11. Կծող կենդանու սատկելուց կամ նրան
սպանելուց հետո՝ ցանկալի յէ նրա գլուխիք
կտրել և հանձնել բժշկական լաբորատորիա-
յին՝ հետազոտություն կատարելու համար։

12. Յեթե սակավարժեք ընտանի կենդա-
նիներին կծած լինեն կատաղած կենդանիներ՝
ուզատակահարմար և նրանց սպանել, առանց
սղասելու նրանց հիվանդանալուն։ Թանկար-
ժեք կենդանիներին անհրաժեշտ և մեկուսա-
ցնել և պահել անասնաբուժի հսկողության
տակ, մինչև չորս ամիս, իսկ հիվանդության
շանները յերեալու դեպքում՝ անմիջապես
սղանել։

13. Կատաղության դեպքերը սահմանափակելու համար անհրաժեշտ են ա) թափառական և անտեր չներին վոչնչացնել, բ) անային չներին կապած պահել և չժողղնել թափառելու, գ) կենդանու բնավորությունը փոխվելու և կասկածելի լինելու դեպքում՝ դիմել մոտակա անասնաբուժին և ողտվել նրա խորհուրդներով և ցուցմունքներով:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039171

ԴԻՆԸ 10 ԿՈՎ.

1044
A I
4290